



ԵՄ- Հայաստան
հարաբերություններ.
հետագա զարգացումներ
և հեռանկարներ

Փետրվար 2014

Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	3
Նախաբան	4
Համառոտ ակնարկ	4
Ներածություն և նախադրյալներ.....	5
ԵՄ-Հայաստան համագործակցության ձեռքբերումները	6
ԵՄ համագործակցության շրջանակներն ու օրինակներ	8
1. ԵՄ-ի համագործակցությունը ՄԵՌԿՕՍՈՒՌ-ի հետ	8
1.1 ԵՄ-ի համագործակցությունը Բրազիլիայի հետ.....	9
1.2 ԵՄ-ի համագործակցությունը Ուրուգվայի հետ.....	10
2. ԵՄ-ի համագործակցությունը ԱՄԵԱՆ-ի հետ	10
2.1 ԵՄ-ի համագործակցությունը Բնդոնեզիայի հետ	10
2.2 ԵՄ-ի համագործակցությունը Մալազիայի հետ	11
ԵՄ-Հայաստան համագործակցության հեռանկարները.....	12
1. ԵՄ-Հայաստան հարաբերությունների ներկա իրավական հիմքերը	12
2. ԵՄ-Հայաստան հետագա հարաբերությունների այլընտրանքային իրավական հիմքերը	133
3. Հնարավոր համագործակցության ոլորտներ.....	144
Եզրակացություններ և առաջարկություններ	166

Հապավումների ցանկ

ԱՀ	Ասոցացման համաձայնագիր
ԱՄԵԱՆ	Հարավարևելյան Ասիայի ազգերի ասոցիացիա
ՀԳՀՀ	Համապարփակ գործընկերության և համագործակցության համաձայնագիր
ԱՌՀ	Ազգային ռազմավարական հետազոտություն
ԽՀԱԱՀ	Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր
ԱԼԳ	Արևելյան գործընկերություն
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՀՀԿ	Եվրոպական հարևանության և համագործակցության կառույց
ԵՄ	Եվրոպական Միություն
ՇՀՀ	Շրջանակային համագործակցության համաձայնագիր
ՄԵՌԿՕՍՈՒՌ	Հարավային Ամերիկայի ընդհանուր շուկա
ԱԻԾ	Ազգային ինդիկատոր ծրագիր
ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության համաձայնագիր
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություններ

Նախաբան

Այս համառոտ հետազոտության նպատակը ԵՄ-Հայաստան հարաբերությունների շուրջ կառուցողական բանավեճ խթանելն է:

Սույն հետազոտությունը նպատակ չունի ներկայացնել ԵՄ-Հայաստան հարաբերությունների զարգացման տարբեր սցենարները. այն նպատակ ունի ակնարկ կատարել ԵՄ-Հայաստան հարաբերությունների ապագայի վերաբերյալ՝ նշված ոլորտում երկու կողմերի իրականացված աշխատանքի, ինչպես նաև ամբողջ աշխարհում այլ երկրների փորձի և օրինակների հիման վրա:

Հետազոտությունը նպատակ չունի ենթադրություններ կատարել ԵՄ-Հայաստան հարաբերությունների ներկա իրավիճակի մասին, այլ՝ նպատակ ունի այդ հարաբերությունների զարգացմանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ երկու կողմերն էլ մոտ ապագայում պետք է վերանայեն իրենց հարաբերությունների հիմքերը:

Համառոտ ակնարկ

2013 թվականի հուլիսին Հայաստանը եզրափակեց ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի շուրջ իր բանակցությունները, որը ներառում էր նաև Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը (այսուհետև՝ ԽՀԱԱՀ): Եվրասիական Միությանը միանալու Հայաստանի հայտարարությունը, սակայն, խոչընդոտում է այս համաձայնագրի նախաստորագրմանը՝ հաշվի առնելով համաձայնագրի առևտրային բաղադրիչի հետ անհամատեղելիությունները: Այնուամենայնիվ, շուրջ վերջին չորս տարիների ընթացքում ԵՄ-ն և Հայաստանը զարգացրել և նվաճել են համագործակցության բարձր մակարդակներ: Սրա ապացույցն են Մարդու իրավունքների պաշտպանի կառույցի, ընտրական գործընթացների, թափանցիկության, արդյունավետ կառավարման, ազատ մամուլի, սահմանների կառավարման և հանցավորության ու կաշառակերության դեմ պայքարի ոլորտներն երևում ձեռքբերումները: Սրանք ԵՄ-ի կողմից առաջարկված բարեփոխումները իրականացնելիս և չափանիշներին համապատասխանելիս Հայաստանի ներդրած ջանքերի օրինակներ են:

Մյուս կողմից, ԵՄ-ն սերտ հարաբերությունների մեջ է ողջ աշխարհում իր մնացած գործընկերների հետ, այդ թվում՝ այնպիսի մաքսային միությունների և առևտրային բլոկերի հետ, ինչպիսիք են՝ Բրազիլիան, որի համար ԵՄ-ն առաջնային առևտրային գործընկեր է, և Մալազիան, որի հետ համագործակցությունը առևտրի և այլ բանգավառներում առանձնացված է: Հիմնվելով այս օրինակների վրա, պետք է ԵՄ-ի և Հայաստանի միջև համագործակցության դաշտ ստեղծել՝ անկախ դրանցից յուրաքանչյուրի՝ երրորդ կողմի հետ ունեցած առևտրային պարտավորությունների:

Բացի այդ, թե ԵՄ-ի և թե Հայաստանի կողմից նկատվում է ԵՄ-Հայաստան համագործակցության իրավական հիմքերի թարմացման անհրաժեշտության հարցում աստիճանաբար ամրապնդվող համաձայնություն՝ վերը նշվածի հիման վրա: Նման

իրավական հիմքերը կարող են ներկայանալ «Պարզեցված ԱՀ» կամ «ԳՀՀ Պլյուս» ծրագրերի տեսքով, որոնք հետագայում թույլ կտան ԵՄ-ին և Հայաստանին զարգացնել իրենց հարաբերությունները՝ կուտակելով իրենց ներկա նվաճումները և հաշվի առնելով սան և այն, որ համագործակցության ոլորտների գերակշիռ մեծամասնությունը առևտրի ոլորտին չեն վերաբերում:

Այնուամենայնիվ, անգամ տնտեսական համագործակցության դաշտում ոլորտային համաձայնագրերը պետք է մնան իրականանալի՝ ինչպես օրինակ Ուրուգվայի դեպքում է:

Վերջապես, այժմ Հայաստանի Հանրապետության հերթն է նախաձեռնողական լինել ԵՄ-ի հետ հետագա համագործակցության համար, քաղաքական պատրաստակամություն ցուցաբերել և կոնկրետ առաջարկներ անել՝ 2013 թվականի նոյեմբերին Վիլնյուսում ընդունված ԵՄ-Հայաստան համատեղ հռչակագրով սահմանված ոլորտներում:

Ներածություն և նախադրյալներ

1996 թվականից Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունները աստիճանաբար ակտիվանում էին՝ 1996 թվականին կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրից¹ (այսուհետ ԳՀՀ) վերածվելով մինչև ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի: Վերջինիս համար բանակցությունների գործընթացը սկսվեց 2010 թվականի հուլիսին, երբ 2013 թվականի հուլիսի 25-ին ԱՀ-ի և ԽՀԱԱՀ-ի բանակցությունները հասան իրենց գագաթնակետին: Այս համաձայնագրի առևտրային բաղկացուցիչը՝ ԽՀԱԱՀ-ն, նույնպես ենթադրում էր Հայաստանի մուտքը Եվրամիության ներքին շուկա՝ դեպի ԵՄ-ի Մաքսային Միություն:

2013 թվականի սեպտեմբերին, սակայն, երկրի նախագահը հայտարարեց, որ Հայաստանը կմիանա Ռուսաստանի կողմից կառավարվող Մաքսային Միությանը՝ Բելառուսի և Ղազախստանի հետ միասին: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունը չէր կարող նախաստորագրել Ասոցացման համաձայնագիրը 2013 թվականի նոյեմբերին տեղի ունեցած ԵՄ-ի Վիլնյուսի գագաթաժողովի ժամանակ, քանի որ երկիրը չի կարող պատկանել երկու տարբեր մաքսային միությունների, եթե այս երկու մաքսային միությունները չունեն նախապես կնքված առևտրային համաձայնագիր և չեն բավարարում նույն չափանիշները:

Այնուամենայնիվ, Վիլնյուսի գագաթաժողովին ԵՄ-ն և Հայաստանը ընդունեցին հռչակագիր²՝ կամք հայտնելով շարունակել և ամրապնդել իրենց համագործակցությունը ոչ առևտրային այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մարդու իրավունքները, արդյունավետ կառավարումը, իրավունքի գերակայությունը և այլն: Հատկապես այս հիմնախնդիրները, ըստ էության, կազմում են ԵՄ-Հայաստան ԱՀ-ի գերակշիռ մասը: Մինչդեռ, այս ընթացքում ամենատարբեր կարծիքներ էին հնչում՝ սկսած, որ Հայաստանը դեռ հնարավորություն ունի

¹ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:21999A0909%2801%29:EN:HTML>

² http://www.eeas.europa.eu/statements/docs/2013/131129_03_en.pdf

ստորագրել ԱՀ-ը Վիլնյուսում առանց ԽՀԱԱՀ-ի մինչև դասական, անհիմն, կատաստրոֆիկ կարծիքներին, որ տեղի ունեցածը ԵՄ-Հայաստան հարաբերություններին վերջն է:

Ի վերջո, արկածախնդրությանը տեղի տվեց պրագմատիկ մոտեցմանը, և ինչպես արդեն նշված է, ԵՄ-ն և Հայաստանը առանձնացրեցին համագործակցության որոշ ոլորտներ՝ պարտավորվելով հնարավորինս շուտ վերանայել այդ հարաբերությունների հիմքերը: .

Ներկայում ԵՄ-Հայաստան հարաբերությունները հետ համակարգվում են ԵՄ-Հայաստան ԳՀՀ-ով, որը ուժի մեջ է մտել 1999 թվականին և իրավական հիմքեր է ապահովում քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսության, օրենսդրության, մշակույթի, անօրինական գործողությունների կանխարգելման և անօրինական գաղթի ոլորտներում համագործակցության, ինչպես նաև տեխնիկական աջակցության, ապրանքների առևտրի ֆինանսական համագործակցության համար: Այն նաև վերահսկում է բիզնեսի և ներդրումների, ծառայությունների միջսահմանային մատակարարման և օրենսդրական համագործակցության վրա ներգործող դրույթները:

ԵՄ-Հայաստան հարաբերությունների հիմքի և համագործակցության հատկապես այս բնագավառների վրա հիմնվելով է, որ մենք հույս ունենք, որ սույն հետազոտությունը կարող է համեստ ներդրում լինել և կարող է Հայաստանի օրենսդրական մարմիններին, ԵՄ-Հայաստան հարաբերությունների պատասխանատվությունը ստանձնած անձանց և, ոչ պակաս կարևոր մեկ այլ խմբի՝ հայ հասարակությանը ԵՄ-Հայաստան հարաբերությունների զարգացման մի քանի սցենարներ առաջարկել:

ԵՄ-Հայաստան հարաբերությունների ձեռքբերումները

2010-2013 թվականները բարեփոխումների առումով անկասկած ամենաինտենսիվ ժամանակաշրջանն է եղել Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության մեջ, և, ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունը մեծ առաջընթացներ է գրանցել բազմաթիվ ոլորտներում ԵՄ-ի կողմից առաջ քաշված բարեփոխումները իրականացնելիս: Այս նշանակալի ջանքերը բազմիցս գնահատվել են Եվրոպական Միության կողմից³:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում ևս Հայաստանը ամրապնդել է Մարդու իրավունքների պաշտպանի (հայկական օմբուդսմենի) անկախությունը և թե օրենսդրական, թե նախագահական ընտրությունները դրական են գնահատվել միջազգային հանրության կողմից⁴, որպես համախմբված ժողովրդավարությանն ընդառաջ քայլ: Բացի այդ, հայկական կառույցները դարձել են առավել թափանցիկ, հետևաբար ավելի կայուն՝ շնորհիվ այդ ոլորտում տեղի ունեցող ընթացիկ բարեփոխումների:

³http://ec.europa.eu/world/enp/docs/2012_enp_pack/progress_report_armenia_en.pdf

⁴<http://www.osce.org/odihr/elections/101314>

Այս առումով Էթիկայի հանձնաժողովի⁵ ստեղծումը, որը հանրային քննարկումներ է կազմակերպում բարձրաստիճան պաշտոնյաների դրսևորման և շահերի բախումների վերաբերյալ, նպաստել է հայկական պետական կառույցների գործունեության ամրապնդմանը: Այնուամենայնիվ, դեռ ջանքեր են պահանջվում հանձնաժողովի աշխատանքները ավելի անկախ դարձնելու և լրացուցիչ վերահսկող լիազորություններ իրականացնելու հարցերում:

Հայաստանը տարածաշրջանում համարվում է առաջատար ըստ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության հրատարակված «Համաշխարհային մամուլի ազատության ինդեքս» 2014 թվականի զեկույցի⁶՝ գրավելով ընդհանուր ցուցակում 78-րդ տեղը, չնայած այն հանգամանքին, որ զեկույցում ևս նշված է ոլորտի հետագա բարեփոխումների անհրաժեշտության մասին: Անձնական տվյալների պաշտպանությունը, աշխատողների բժշկական կարիքների հոգաձությունը, սպառողական պաշտպանության, կրթության, վերապատրաստման և երիտասարդության, ինչպես նաև մշակութային համագործակցության հետ մեկտեղ բարեփոխումների ծրագրի մասն են կազմում⁷:

Անդրադառնալով օրենքի գերակայության ոլորտին՝ պետք է նշել, որ բացի դատական համակարգը լիովին անկախ դարձնելու բարեփոխումներից, հետևյալ օրենսդրական փոփոխություններն են հաստատվել. սահմանների կառավարում, փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքար, հանցագործության, այդ թվում թմրանյութերի, բռության, ինչպես նաև կաշառակերության դեմ ուղղված պայքար⁸: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Հայաստանի դատական համակարգի ներկա իրավիճակը, բարեփոխումները այս ոլորտում դեռ պետք է շարունակվեն:

Զուգահեռաբար, աստիճանաբար իրականացվել է «Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը». էլ-կառավարումը այժմ գործում է ՀՀ կառավարության բազմաթիվ կառույցներում էլեկտրոնային հարկահավաքման համակարգի հետ մեկտեղ: Հայաստանը ստեղծել է առցանց *Ինտերակտիվ բյուջե* համակարգը, որը մարդկանց հնարավորություն է տալիս տեղեկանալ պետբյուջեից, ֆոնդերի կիրառման մասին⁹: Կառավարության գնումների բազմաթիվ բնագավառներ հասանելի են դարձել հանրության համար պարտադիր էլեկտրոնային վճարման համակարգի շնորհիվ¹⁰:

Նշանակալից քայլեր են ձեռնարկվել գործարար միջավայրի պայմանների բարելավման ուղղությամբ: Համաձայն Համաշխարհային բանկի «Doing Business» զեկույցի¹¹՝ Հայաստանը բարելավել է իր դիրքերը 3 տեղով՝ մեծ մասամբ շնորհիվ ընկերություններ գրանցելու վճարի վերացման, աշխատողի ու գործատուի սոցվճարները և անհատական եկամտահարկը միասնական եկամտային հարկի տեսակի մեջ միավորելու շնորհիվ: Բացի այդ, արձանագրվել

⁵ <http://www.epress.am/en/2012/01/11/armenia-president-establishes-ethics-commission-of-high-ranking-officials.html> ; <http://www.ethics.am/>

⁶ <http://rsf.org/index2014/en-eastern-europe.php>

⁷ http://ec.europa.eu/world/enp/docs/2013_enp_pack/2013_progress_report_armenia_en.pdf

⁸ <http://visa-free-europe.eu/wp-content/uploads/2011/06/Armenia-countryraportPASOS.pdf>

⁹ <https://www.e-gov.am/interactive-budget/>

¹⁰ http://www.mfa.am/u_files/file/OGPAP_Armenia_English.pdf

¹¹ <http://www.doingbusiness.org/~media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB14-Full-Report.pdf>

Է կայուն տնտեսական զարգացման ոլորտում բարեփոխումների մի լայն շրջանակ, որն անդրադարձել է ավելի քան 30 ոլորտների, ինչպիսինք են՝ էներգետիկան, տրանսպորտը, շրջակա միջավայրի պահպանությունը, արդյունաբերական և փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համագործակցությունը, ինչպես նաև ապրանքային ստանդարտները:

Ինստիտուցիոնալ մակարդակում աշխատանքներ են տարվել արդյունավետ կառավարման և օրենքի գերակայության ոլորտներում, որոնց հիմնական նպատակը եղել է բարելավել երկրի կառավարչական կարողությունները «Թվինինգ ծրագրերի», մասնագիտական վերապատրաստման դասընթացների և աշխատակիցների աջակցման միջոցով: Ավելին, հայկական ինստիտուտները աստիճանաբար վերակազմավորվել են, նաև նաև ԵՄ մարմինների և ինստիտուտների հետ մրցունակ լինենու նպատակով:

Ընդհանուր առմամբ, վերը նշված ոլորտներում Հայաստանի կողմից իրականացրած շոշափելի բարելավումները էապես նպաստել են Հայաստանին եվրոպական չափանիշներին մոտեցնելու հարցում և դրական ազդեցություն են թողել Հայաստանի քաղաքացիների վրա: Մշակված դժգոհ ու կասկածամիտ հայկական հասարակության համատեքստում այս ցուցանիշները ներկայացնում են Հայաստանի քաղաքացիական հասարակության բոլոր քաղաքիչների համախմբվածությանը նպաստող խիստ ահնրաժեշտ քայլ:

ԵՄ համագործակցության շրջանակներն ու օրինակները

Հաշվի առնելով միջազգային հարթություններում Հայաստանի Հանրապետության վերջին զարգացումները, այս հետազոտության տվյալ բաժնում մենք մտադիր ենք կենտրոնանալ ԵՄ-ի համագործակցության վերլուծության վրա այնպիսի երկրների հետ, որոնք արդեն գոյություն ունեցող մաքսային միության անդամներ են, կամ որոնք մոտ ապագայում մաքսային միություն ինտեգրվելու հեռանկարներ ունեն: Մյուս կողմից ԵՄ-ն նաև սկսել է «Ռազմավարական համագործակցությունների արդիականացման ծրագիրը» մի քանի երկրների հետ, որոնք հիմնված են ոլորտային երկկողմանի համաձայնագրերի վրա: Նպատակն այն է, որ այս օրինակը ոգեշնչման աղբյուր կարող է հանդիսանալ և ԵՄ-Հայաստան համագործակցության, և դրա բովանդակության համար:

1. ԵՄ համագործակցությունը ՄԵՌԿՕՍՅՈՒՌ-ն անդամ պետությունների համար

ՄԵՌԿՕՍՅՈՒՌ-ՌԸ (Հարավային Ամերիկայի ընդհանուր շուկան, որն ունի նաև մաքսային միություն), հիմնադրվել է 1991 թվականին Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի կողմից: Վենեսուելան անդամ է դարձել 2012 թվականի հուլիսին, Բոլիվիան լիիրավ անդամ դառնալու գործընթացում է սկսած 2012 թվականի դեկտեմբերից, մինչդեռ Չիլին, Կոլումբիան, Էկվադորը և Պերուն ասոցացված պետություններ են: Սա նշանակում է, որ

նրանք կարող են միանալ ազատ առևտրի համաձայնագրերին՝ մնալով մաքսային միության բլոկից դուրս:

ԵՄ-ի և ՄԵՌԿՕՍՅՈՒՌ-ի միջև առևտուր իրականացնելու պաշտոնական գրույցները և բանակցությունները շուկայի հասանելիությունը և սակագների շուրջ տեղի են ունենում որպես մի ամբողջական անդամի, այլ ոչ թե որպես դրա առանձին անդամ պետությունների հետ:

1.1 ԵՄ համագործակցությունը Բրազիլիայի հետ

Բրազիլիան ՄԵՌԿՕՍՅՈՒՌ-ի հիմնադիր անդամ է: Սակայն այս պետությունը աստիճանաբար իր հարաբերություններն է զարգացրել նաև ԵՄ-ի հետ:

1992 թվականին ԵՄ-ն և Բրազիլիան ամփոփեցին Եվրոպական տնտեսական համայնք-Բրազիլիա Շրջանակային համագործակցության համաձայնագիրը (այսուհետև՝ ՇՀՀ)՝ նպատակ ունենալով տարածել և տարբերակել կողմերի միջև առևտուրը՝ առաջ մղելով համագործակցության որոշ ոլորտներ: Հետագա տարիներին մի շարք երկկողմանի պայմանագրեր ստորագրվեցին ԵՄ-ի և Բրազիլիայի միջև ծովային տրանսպորտի (1992թ.), տեքստիլի և հագուստի արդյունաբերության (2002թ.), գիտական և տեխնոլոգիական համագործակցության (2004թ.), միաձուլված էներգիայի հետազոտության (2009թ.), քաղաքացիական ավիացիայի անվտանգության (2010թ.) ոլորտներում: Նմանատիպ ոլորտային համաձայնագրեր ստորագրվեցին նաև ՄԵՌԿՕՍՅՈՒՌ-ի այլ անդամ պետությունների հետ:

Ավելին, 2007 թվականին ԵՄ-ն սկսեց «Ռազմավարական գործընկերության ծրագիր» Բրազիլիայի հետ¹², որը ներառում էր համագործակցության վերաբերյալ կետեր, ինչպիսիք են արդյունավետ բազմակարծություն, մարդու իրավունքներ, կլիմայի փոփոխություն, կայուն էներգետիկա, աղքատության դեմ պայքար, ինչպես նաև համագործակցության կետեր ՄԵՌԿՕՍՅՈՒՌ-ի ինտեգրացիոն գործընթացի և Հարավային Ամերիկայի կայունության և բարգավաճման բնագավառներում, ինչից կարելի է ենթադրել, որ Ռազմավարական գործընկերություն ծրագիրը և դրա ոլորտային համաձայնագրերը ազդեցություն ունեն նաև ողջ տարածաշրջանի վրա: Առևտուրը նույնպես երկխոսության քննարկման թեմա է դարձել, քանի որ ԵՄ-ն դարձավ երկրի ամենակարևոր առևտրային գործընկերը՝ կազմելով ողջ առևտրի ծավալի 20,8%, և ամենամեծ օտարերկրյա ներդրողը՝ երկրում թվով ամենաշատ ոլորտներում ներդրումներ կատարելու առումով¹³:

¹² http://eeas.europa.eu/brazil/index_en.htm ԵՄ-Բրազիլիա Ռազմավարական գործընկերություն ծրագրի Միացյալ Գործողություններ պլանում ասվում է. «Միացյալ Գործողություններ պլանը թույլ կտա երկու կողմերին էլ սկսել նոր, կանոնավոր երկկողմանի բանակցություններ, ինչպես նաև կամրապնդի գործընկերությունը այն ոլորտներում, որոնք, առանց քննարկման, ռազմավարական կարևորություն ունեն կողմերի համար: Ղեկավարները ընդգծում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումների համար բարձր մակարդակի քաղաքական երկխոսության կարևորությունը »:

¹³ <http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/brazil/>

1.2 ԵՄ համագործակցությունը Ուրուգվայի հետ

Ուրուգվայը, որը նույնպես ՄԵՆԿՕՍՅՈՒՌ-ի հիմնադիր անդամ է, ԵՄ-ի հետ ՇՀՀ-ն ստորագրել է 1992 թվականին¹⁴: Այդ ժամանակից ի վեր երկկողմանի հարաբերություններ ծավալվեցին ոչ միայն տնտեսության շրջանակներում (ԵՄ-ն ներդրումների ամենամեծ աղբյուրն է հանդիսանում¹⁵), այլ նաև քաղաքականության շրջանակներում: Համաձայնագիրը կանխատեսում էր համագործակցություն այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են առողջապահությունը, սոցիալական, վարչական և սննդի հիմնահարցերը, գյուղական զարգացումը, շրջակա միջավայրը, ներդրումների խթանումը և տեխնոլոգիաների փոխանցումը:

Ուրուգվայի և ԵՄ-ի միջև առևտրային հարաբերությունները կարևոր են, որովհետև Ուրուգվայը մշտապես ավելցուկ է ունենում՝ հիմնականում գյուղատնտեսական ապրանքների արտահանման շնորհիվ: ԵՄ-ն Ուրուգվայի երկրորդ առևտրային գործընկերն է (2011 թվականին կազմում էր Ուրուգվայի արտահանման ողջ ծավալի 15%-ը) և համարվում է ուրուգվայական տավարի մսի սպառման առաջին շուկան (կազմում է տավարի մսի արտահանման 29%-ը)¹⁶:

2. ԵՄ համագործակցությունը ԱՄԵԱՆ երկրների հետ

Հարավարևելյան Ասիայի ազգերի ասոցիացիան՝ ԱՄԵԱՆ-ը, Հարավային Ասիայում գտնվող տաս երկրների քաղաքական և տնտեսական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1967 թվականին Բնդոնեզիայի, Մալազիայի, Ֆիլիպինների, Սինգապուրի և Թայլանդի կողմից: Այդ ժամանակից ի վեր, այն ընդլայնվել և ներառել է նաև Բրունեյը, Բիրման (Մյանմարը), Կամբոջան, Լաոսը և Վիետնամը: Ասոցիացիայի նպատակներն են խթանել տնտեսական աճը, սոցիալական առաջընթացը և անդամ պետությունների մշակութային զարգացումը: Տնտեսական տեսանկյունից՝ անդամ պետությունները համախմբվել են ազատ առևտրի գոտու շուրջ և նրանք ակնկալում են մինչ 2015 թվականը կյանքի կոչել ԱՄԵԱՆ-ի Տնտեսական համայնք ծրագիրը, որը ներառում է միասնական շուկա, բարձր մրցակցային տնտեսական տարածաշրջան, արդար տնտեսական զարգացման, ինչպես նաև գլոբալ տնտեսության մեջ լիովին ինտեգրված տարածաշրջան: Ավելին, ԱՄԵԱՆ-ի որոշ անդամներ, օրինակ՝ Ֆիլիպինները, պնդում են, որպեսզի ստեղծվի ԱՄԵԱՆ-ի մաքսային միություն:

2.1 ԵՄ-ի համագործակցությունը Բնդոնեզիայի հետ

Երբ Ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունները ԵՄ-ի և ԱՄԵԱՆ-ի որոշ երկրների հետ բարդ թվացին, ԵՄ-ն որոշեց շարունակել իր համագործակցությունը Բնդոնեզիայի հետ՝ կենտրոնանալով ոչ առևտրային ոլորտների վրա: Այսօր երկու կողմերն էլ

¹⁴ http://eeas.europa.eu/uruguay/index_en.htm

¹⁵ <http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/uruguay/>

¹⁶ http://eeas.europa.eu/uruguay/index_en.htm

ակտիվորեն աշխատում են ԵՄ-Ինդոնեզիա շրջանակներում Համապարփակ գործընկերության և համագործակցության համաձայնագրի (այնսուհետև՝ ՀԳՀՀ) համար: Համաձայնագիրը նախատեսում է երկկողմանի համագործակցություն ԱՍԵԱՆ-ի անդամ պետությունների և, ընդհանուր առմամբ, դրանց պատկանող կազմակերպությունների հետ: Այլ բնագավառներ նույնպես ներառված են համաձայնագրի մեջ: ԵՄ-ն և Ինդոնեզիան պարտավորվել են աշխատել ոչ միայն մշակութային և սոցիալական հարցերի ոլորտներում, այլ նաև իրենց արդյունաբերական քաղաքականության և փոքր ու միջին ձեռնարկությունների հետ համագործակցության ոլորտներում՝ խթանելով համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումը արդյունաբերության ընտրված ոլորտներում և տնտեսվարող սուբյեկտների միջև շփումների հարցում, իսկ գիտության և տեխնոլոգիայի ոլորտներում նպաստել տեղեկատվության և մեթոդների փոխանակությունը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների վերապատրաստման այլ ձևերը¹⁷:

Այս պայմանագրով ԵՄ-ն և Ինդոնեզիան պարտավորվում են բարելավել ապրանքների և ուղևորների փոխադրումը, ծովային և ավիացիոն ապահովությունն ու անվտանգությունը, մարդկային ռեսուրսների զարգացումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ բարեփոխումներ կատարելով գոյություն ունեցող երկկողմանի Օդային ծառայությունների պայմանագրերի մեջ: Կողմերը պարտավորվում են ծովային տրանսպորտի ոլորտում երկխոսություն ծավալել, որն Ինդոնեզիայի դեպքում կարևոր հարց է համարվում: Կրթությունը և մշակույթը, մարդու իրավունքները, առողջապահությունը, պետական կառավարման արդիականացումը և ապօրինի թմրանյութերի, փողերի լվացման և կաշառակերության դեմ պայքարի հիմնախնդիրների շուրջ համագործակցությունը նույնպես օրակարգում է: Ինչ վերաբերում է ՀԳՀԿ-ի առևտրային և ներդրումների բաղադրիչին, պետք է նշել, որ կողմերը հիմնվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոնակարգի վրա և սահմանել են մի շարք նպատակներ, որոնք խրախուսում են առևտրի կանոնակարգերի թափանցիկությունը՝ նպաստելով միմյանց շուկաներում հասանելիությանը, մասնավորապես ծառայությունների հարցում: Երկու կողմերը հետաքրքրություն են հայտնել մաքսային համագործակցության շուրջ արձանագրություն կնքելու հետագա հնարավորության վերաբերյալ, առանց որևէ հստակ հեռանկար հայտնելու ԽՀԱԱՀ-ի նկատմամբ:

2.2 ԵՄ համագործակցությունը Մալազիայի հետ

Երկկողմանի ԳՀՀ-ի փաստաթուղթ է դրված բանակցության սեղանին ԵՄ-ի և Մալազիայի միջև, ում հարաբերությունները Եվրոպական Համայնք-ԱՍԵԱՆ համաձայնագրի ներքո զարգանում են ավելի քան երեսուն տարի: Այս ԳՀՀ-ի միջոցով երկու կողմերն էլ ցանկանում են ամրապնդել իրենց հարաբերությունները և փոխադարձ պարտավորությունները՝ բազմաթիվ թեմաների շուրջ համագործակցության ճանապարհով: Իհարկե, անհրաժեշտ է նկատի ունենալ համագործակցության տարբեր բնագավառներ, քանի որ միայն տնտեսական հնարավորությունները բավարար չեն այս նպատակի իրագործման

¹⁷ http://eeas.europa.eu/delegations/indonesia/documents/eu_indonesia/eu_idnpca_en.pdf

համար: Մակայն Մալազիան և ԵՄ-ն չեն բացառում տնտեսական համագործակցության հնարավորությունները: Բացի ԳՀՀ-ից նրանք առանձին-առանձին բանակցություններ են վարում նաև Ազատ առևտրի համաձայնագրի շուրջ՝ իրենց առևտրային հարաբերությունները պահելու, կարգավորելու և զարգացնելու նպատակով:

ԵՄ-Հայաստան համագործակցության համար հեռանկարները

1. ԵՄ-Հայաստան հարաբերությունների ներկա իրավական հիմքերը

Հայաստանի (որպես Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներից մեկի) ներառումը Եվրոպական հարևանության քաղաքականություն (ԵՀՔ) (2004թ.) և Արևելյան Գործընկերության (ԱԳ) (2009թ.) ծրագրեր նոր շրջանակներ ու ծրագրեր ապահովեց ԵՄ-Հայաստան միացյալ աշխատանքի համար՝ համալրելով ԳՀՀ-ն: Մասնավորապես, Հայաստանը ընդունում է Ազգային ռազմավարական հետազոտությունը (այսուհետև՝ ԱՌՀ)¹⁸, որը մշակվել է Հայաստանի կառավարության հետ սերտ խորհրդակցության արդյունքում և արտացոլում է ազգային առաջնահերթությունները: Ընթացիկ ԱՌՀ-ն առնչվում է 2007-2013 թվականներին և հիմնականում իրականացվում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (այսուհետև՝ ԵՀԳԿ)¹⁹ միջոցով:

ԱՌՀ-ն սահմանում է Հայաստանի համար ԵՄ աջակցության հիմնական նպատակները՝ ներառելով իր բոլոր քայլերն ու ծրագրերը: ԱՌՀ-ի հիման վրա ընդունվում և իրականացվում է ԵՀԳԿ-ի համար Ազգային ինդիկատոր ծրագիրը (այսուհետև՝ ԱԻԾ): Այն նպաստում է ԳՀՀ-ի հիմնական նպատակների, ԵՀՔ Գործողությունների պլանի և Արևելյան գործընկերության այլ առաջնահերթությունների իրականացմանը և պարունակում է այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ ավելի սերտ քաղաքական համագործակցությունը, առևտրային, տնտեսական հարաբերությունները Հայաստանի և ԵՄ միջև, Հայաստանի շրջանների միջև սոցիալական և տնտեսական զարգացումը, ընդլայնված շարժունակությունը և անվտանգությունը՝ ապրանքների և անձանց տեղաշարժը դյուրին դարձնելու նպատակով: Այս ծրագիրը հաշվի է առնում նաև տարածաշրջանում փոփոխվող իրավիճակի հետևանքները: 2011-2013 թթվականները ներառող ԱՌՀ-ն սահմանում է Հայաստանի հանդեպ ԵՄ-ի աջակցության գերակա ոլորտները՝ ունենալով 157.3 միլիոն եվրո բյուջե: Այս գերակա ոլորտներից միայն մեկն է ուղղված առևտրին, իսկ ֆինանսական աջակցության առումով՝ մյուս երկու ոչ առևտրային գերակա ոլորտները միայնալ կազմում են ԵՄ աջակցության մոտ 75%-ը:

¹⁸ http://ec.europa.eu/world/enp/pdf/country/enpi_csp_armenia_en.pdf

¹⁹ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք ծրագիրը ստեղծվել էր որպես Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) անդամ պետությունների հետ հարաբերություններում բարեկեցության և լավ հարևանության մթնոլորտը զարգացնելուն նպաստող ծրագիր:

Նույն իրավիճակը կարելի է վերագրել ԱՀ-ին, որտեղ առևտրին վերաբերվող հարցերը կազմում են համաձայնագրի բոլոր բաղադրիչների մեկ տասներորդ մասը՝ չնայած արդարացի կլինի ասել, որ ԽՀԱԱՀ-ն հանդես է գալիս որպես խթան և հաճախ ԱՀ-ում սահմանված բոլոր բարեփոխումները իրականացնելու հիմնական դրդապատճառն է:

2. ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագա զարգացումների այլընտրանքային իրավական հիմքերը

Պարզ է, որ ԵՄ-ն և Հայաստանը պետք է բարելավեն իրենց հարաբերությունների իրավական հիմքերը, քանի 1999 թվականից գործող ԳՀՀ-ն հնացած է թվում մի երկրի համար, որը վերջին չորս տարիների ընթացքում ԵՄ-ի հետ համաձայնեցված բարեփոխումները բանակցելու և դրանք կյանքի կոչելու համար նշանակալի ջանքեր է գործադրել:

Անշուշտ, թվում է, որ թե ԵՄ-ի և թե Հայաստանի կողմից իրենց հարաբերությունների իրավական հիմքերը վերանայելու համար կա համաձայնություն, քանի որ այդ մասին նախաձեռնություն է հանդես բերվել 2013 թվականի նոյեմբերի 29-ին կատարված ԵՄ-Հայաստան հայտարարության համատեքստում²⁰: Հաշվի առնելով արդեն բանակցությունների փուլն ավարտած ԱՀ/ԽՀԱԱՀ-ին հետևելու անհնարին լինելու փաստը, պետք է կազմել մի նոր փաստաթուղթ, ինչպես օրինակ՝ «Պարզեցված ԱՀ»-ն կամ «ԳՀՀ Պլյուս»-ը, որոնք կպահպանեն նախկինի ձեռքբերումները և հիմնված կլինեն դրանց վրա:

Տեղին է նշել, մասնավորապես, ԵՄ-ի կողմից վերջին շրջանում բազմիցս արված հայտարարությունները ԱլԳ երկրները միմյանցից տարբերակման համար:

Այս դեպքում նվազում է Հայաստանին առաջարկվող ստանդարտացված փաստաթղթի «նմուշ»-ի վտանգը, որը սահմանում է ԵՄ-ի հարաբերությունները ցանկացած ԱլԳ երկրի հետ՝ առանց հաշվի առնելու տվյալ երկրի ներքին իրավիճակը և աշխարհաքաղաքական պայմանները: Փոխարենը, ԵՄ-Հայաստան հարաբերությունների համար նոր իրավական հիմքերը հաշվի կճանաչեն Հայաստանի իրավիճակը և հեռանկար կառաջարկեն Հայաստանի հավակնություններին և առավելություններին համապատասխան համագործակցության համար: Սա Հայաստան-ԵՄ հետագա հարաբերությունների համար գերակտիվ համապատասխանեցված համագործակցության շրջանակներ առաջարկելու լավ հնարավորություն կլինի, ինչը չի կարող անտեսվել պետության կողմից:

Ամփոփելով նախորդ գլուխները և Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունը միջազգային մակարդակով, կարելի է հետևել Մալագիայի մոտեցմանը՝ առևտրի բաղադրիչը մնացած այլ հարաբերություններից զատելու առումով: Այնուամենայնիվ, ինչպես մենք հենց նոր նշեցինք, ԳՀՀ-ն չի կարող համապատասխանել համագործակցության այն բարձր մակարդակին, որին ԵՄ-ն և Հայաստանը արդեն հասել են: Այս առումով, թեև Համապարփակ գործընկերության և համագործակցության համաձայնագիրը կարող է

²⁰ http://www.eeas.europa.eu/statements/docs/2013/131129_03_en.pdf

իրավական հիմք համարվել, սակայն այն դեռևս չի անդրադառնում ԵՄ-Հայաստան ԱՀ-ում նշված համագործակցության բոլոր ոլորտներին (անկախ առևտրի բաղադրիչից):

Կատարյալ կլինեք, եթե ստեղծվեր ասոցացման համաձայնագրի մի նոր տեսակ, որը նպատակ կունենար անդրադառնալ ԵՄ-Հայաստան ԱՀ-ի բոլոր ոչ առևտրին վերաբերվող բաժիններին, քանի որ դրա շուրջ բանակցությունները հաջողությամբ ամփոփվել են 2013 թվականի հուլիսին:

3. Հնարավոր համագործակցության ոլորտներ

Ինչպես արդեն նշվել է, ԵՄ-Հայաստան հարաբերությունների մեծ մասը ուղղակիորեն չի առնչվում առևտրի բնագավառին, հետևաբար պարզ է, որ կան բավարար պայմաններ համագործակցությունը բարձր մակարդակի վրա պահելու համար՝ հատկապես այն դեպքում, երբ առկա է այդպես վարվելու քաղաքական մեծ կամք:

Ինչպես Վիլնյուսում երկու կողմերը հաստատել են, այդպիսի համագործակցության հիմնական հիմքերը պետք է լինեն ժողովրդավարական ինստիտուտների և դատական համակարգի բարելավումը, մարդու իրավունքների և օրենքի գերակայության խթանումը, արդյունավետ կառավարումը, կաշառակերության դեմ պայքարը և քաղաքացիական հասարակության ամրապնդումը:

Ավելի կոնկրետ, այն կարող է վերաբերել ԱՀ-ի չորս բաժիններից երեքին (բոլորին՝ բացի ԽՀԱԱՀ-ից), որը ԵՄ-ն և Հայաստանը ամփոփեցին 2013 թվականի հուլիսին՝

- Արտաքին և անվտանգության ընդհանուր քաղաքականություն
- Արդարադատություն և ներքին քաղաքականություն
- Շրջակա միջավայրը, գիտությունը, տրանսպորտը և կրթությունը ներառող հիմնախնդիրներ

Մասնավորապես, այս նոր ԱՀ-ը կլինի մի համապարփակ համաձայնագիր, որը կանդրադառնա քաղաքական և տնտեսական ոլորտներում արդեն գոյություն ունեցող լայնածավալ համագործակցությանը և հետագայում կզարգացնի այս ոլորտները: ԵՄ-Հայաստան հարաբերություններում նոր որակ ստեղծելու համար այն պետք է դուրս գա և ծավալվի ԳՀՀ-ով սահմանվող պարտավորությունների շրջանակներից:

Նոր համաձայնագիրը պետք է երաշխավորի ընդհանուր արժեքների, նկատելի ժողովրդավարության և օրենքի գերակայության, արդյունավետ կառավարման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, այդ թվում նաև փոքրամասնությունների իրավունքների, շուկայական տնտեսության և կայուն զարգացման թեմաների շուրջ ինստիտուցիոնալ երկխոսության համար ավելի ամուր պարտավորվածություն:

Այն կարող է ընդլայնել նաև արտաքին և անվտանգության քաղաքականության շուրջ համագործակցությունը՝ կենտրոնանալով տարածաշրջանային հիմնախնդիրների, զենքի չտարածման և զինաթափման խնդիրների շուրջ: Տնտեսական այնպիսի ոլորտներում համագործակցությունը, ինչպիսիք են բիզնեսի և ներդրումների, հանրային ֆինանսների

բնագավառը, մակրոտնտեսական կայունությունը, զբաղվածությունը, ինչպես նաև սոցիալական հիմնախնդիրները էներգետիկ հարցերում համագործակցության հետ մեկտեղ նույնպես կարող են համաձայնագրի տեքստի մի մաս դառնալ և հատուկ ուշադրություն հրավիրել մատակարարման անվտանգությանը վերաբերվող հարցերին:

Մյուս կողմից, զարգացած հարաբերությունները այլ ոլորտային քաղաքականության բնագավառներում, ինչպիսիք են օրինակ՝ տրանսպորտը և մասնավորապես ավիացիան, շրջակա միջավայրը և առողջապահությունը, գիտությունը և տեխնոլոգիաները, կրթությունը, մշակույթը, տեղեկատվական հասարակությունը և ՁԼՄ-ները, պետք է նույնպես ներառված լինեն համաձայնագրի տեքստում: Պետք է հետազայում ամրապնդվեն մարդկային շփումները՝ դպրոցների, ուսանողների (կրթաթոշակների ավելի մեծ քանակ) և հետազոտողների փոխանակման և համագործակցության շնորհիվ:

Բացի այդ, արդարադատության, ազատությունների և անվտանգության ոլորտներում հետագա համագործակցությունը ինստիտուտների ստեղծմանը համատեղ, որոնց միայն մասնակիորեն է անդրադարձ կատարվել ԳՀՀ-ում, կարող են դառնալ այս նոր ԱՀ-ի մասը:

Վերջապես, թեև առևտրի ոլորտում Հայաստանի Հանրապետությունը ներկայումս պետք է միանա Ռուսաստանի կողմից կառավարվող մաքսային միությանը, դեռևս հնարավոր է պատկերացնել ԵՄ-ի հետ համագործակցություն յուրաքանչյուր ոլորտում: Օրինակ, երկու կողմերին հետաքրքրող դաշտերում ԵՄ-ի հետ կարող են կնքվել ոլորտային պայմանագրեր, հատկապես երբ խոսքը վերաբերում է տեխնիկական աջակցությանը. օրինակ՝ «Թվինինգ ծրագրեր»-ի միջոցով, ինչպես Ուրուգվայի և Բրազիլիայի դեպքում է: Հիմնական մարտահրավերը մնում է այն, որ Հայաստանը կարողանա ընդունել և պահպանել ԵՄ ստանդարտները և կարողանա լիովին բարելավել որակի ենթակառուցվածքների հաստատությունները ԵՄ չափանիշներին համահունչ, ինչը, իհարկե, կլինի այսպիսի ոլորտային պայմանագրերի բանակցությունների հիմնական թեման: Ամեն դեպքում, թվում է, թե Հայաստանը Եվրասիական Մաքսային Միությանը անդամակցել ցանկացող մյուս երկրների շարքում որդեգրել է ԵՄ չափանիշներին ամենամոտ քաղաքականությունը: Ուստի, կարելի է ենթադրել, որ Մաքսային Միության անդամ պետությունների ընկերությունները կընդյալնեն իրենց ներկայությունը Հայաստանում: Այս առումով առևտրի ոլորտում համագործակցության լրացուցիչ մեխանիզմներ մշակելը փոխշահավետ կլինի թե Հայաստանի և թե ԵՄ-ի համար:

Եզրակացություններ և առաջարկություններ

Սույն հետազոտության մեջ նկարագրված իրավիճակը հետազոտելիս կարևորագույն գործոն է այն հանգամանքը, որ ԵՄ-ի ողջ պատմության մեջ չկա այնպիսի նախադեպ, որ երրորդ կարգի պետություններից որևէ մեկը ամփոփի ԵՄ-ի հետ ԱՀ-ի և ԽՀԱԱՀ-ի բանակցությունները և ձախողի դրանց կնքելը: Հետևաբար կոնկրետ լուծումները և նոր մոտեցումները կարևոր են ներկա իրավիճակը հաղթահարելու, ինչպես նաև Վիլնյուսի զագաթնաժողովի ժամանակ առանձնացված այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ժողովրդավարությունը, արդյունավետ կառավարումը, քաղաքացիական հասարակությունը և մարդու իրավունքները, միացյալ աշխատանքը հետագայում զարգացնելու համար:

Այստեղ ակնհայտ է, որ վերը նշված հանգամանքները խարխիլել են Հայաստանի Հանրապետության նկատմամբ հավատը, ինչը Հայաստանը ձեռք էր բերել ԵՄ գործընկերների հետ իրականացված բարեհաջող բարեփոխումների երեք տարիների ընթացքում: Այդ իսկ պատճառով էլ կարևորագույն նախապայման է մնում ներկա իրավիճակից դրական ելքի անհրաժեշտությունը: Ավելին, ԵՄ-ի կողմից կարող է մասնակի թերահավատություն դրսևորել՝ հաշվի առնելով Մաքսային Միության կազմում վերը նշված ոլորտներում Հայաստանի ապագա գործընկերների ցուցաբերած թերի արդյունքները՝ ըստ ԵՄ գնահատականների²¹:

Այս տեսանկյունից դրական կրնկավվի, եթե Հայաստանի պետական պաշտոնյաները պահպանեն ԵՄ կառույցների այցելությունների հաճախականությունն ու ակտիվությունը նույն մակարդակի վրա, ինչպես նախորդ երեք տարիների ընթացքում: Մինևույն ժամանակ խորհրդարանական համագործակցության բաղադրիչը որոշիչ է մնում անորոշության այս շրջանում: Բացի այդ, այն ընկալումը, թե Հայաստանի Ազգային Ժողովը ավելի թույլ պարտավորվածություն ունի ԵՎԲԱՆԵՍ ԽՎ-ի և/կամ ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի նկատմամբ, վտանգի է ենթարկում Հայաստանին այն առումով, որ նման երևույթը կարող է մեկնաբանվել որպես ԵՄ-Հայաստան ընդհանուր հարաբերություններում հետաքրքրության պակաս:

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել ԵՄ-ի առանցքայի արժեքների շուրջ քննակումները խթանելու անհրաժեշտությունը: Պետք է վերացվեն նաև նախկին մոտեցումները, որոնք ԵՄ սահմանագծերին վերաբերվող խնդիրների վրա են կենտրոնացած և ստեղծում են ավելորդ հակասություններ և մերժում:

Ամփոփելու համար պետք է ասել, որ այժմ Հայաստանի հերթն է ԵՄ-ի հետ իր հետագա հարաբերությունների բովանդակության, ինչպես նաև դրան իրավական հիմքերի վերաբերյալ պարզ ազդանշաններ ուղարկելու: Այսպիսի նախաձեռնությունները պետք է հաշվի առնեն Հայաստանի Հանրապետության նոր միջազգային պարտավորությունները, նաև մինևույն ժամանակ պետք է ԵՄ-ի հետ այդ հարցերի շուրջ աշխատելու շարունակական քաղաքական

²¹http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/137151.pdf
http://europa.eu/rapid/press-release_SPEECH-13-690_en.htm
http://eeas.europa.eu/statements/docs/2013/131127_01_en.pdf

կամք արտահայտեն՝ զարգացնելով նախկին ձեռքբերումների վրա հիմնված ասոցացման համաձայնագրի մի նոր ձևաչափ: Այս տեսակետից, վերջերս ԵՄ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը շնորհված հասանելիությունը և ԵՄ ծրագրերին ու գործակալություններին²² և դրանց կիրառման իրավունքը հիանալի հնարավորություն են Հայաստանի համար՝ իր եվրոպական գործընկերների և ԵՄ-ի հետ համագործակցելու պահպանելու համար: Բացի այդ, նոր Եվրոպական հարևանության կառույցը (ԵՀԿ) Հայաստանի համար ֆինանսավորումը ավելի արագ և ճկուն կդարձնի և հնարավորություն կտա Հայաստանին 2014-2020 թվականների համար ԵՄ-ի հետ համագործակցության մի հավակնոտ ծրագիր կազմել:

Վերջապես, նայելով պատմությանը և ևս մեկ անգամ հայացք գցելով քարտեզին՝ պարզ է դառնում, որ այս հարավկովկասյան պետությունը՝ Հայաստանը, արդեն ցույց է տվել իր հզոր հարևանների հետ մի շարք բարդ, հաճախ փոփոխվող իրավիճակներից դուրս գալու իր կարողությունները՝ միևնույն ժամանակ կարողանալով պահպանել իր եվրոպական արժեքները: Ինչքան ավելի մեծ աջակցություն Եվրոպան կցուցաբերի Հայաստանին, այնքան ավելի մեծ կլինի վերջինիս քայլեր կատարելու հնարավորությունները ԵՄ-ի հետ հարաբերությունները վերակազմավորելու համար:

²² <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P7-TA-2013-0555&language=EN&ring=A7-2013-0406>